



ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր / Մտավոր սեփականության իրավունքներ / Ամրագրումներ / Արտարժույթի փոխարժեքներ / Հրաժարում պատասխանատվությունից / Երաշխիք / Հղում դեպի այլ կայքեր

Այս կայքը «Արմենիա» ավիաընկերության սեփականությունն է՝ գրանցված ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 10: Խնդրում ենք նախապես ծանոթանալ կայքից օգտվելու պայմաններին: Կայքից օգտվելով դուք համաձայնում եք ներկայացված պայմաններին:

Գրանցման համարանիշ 290.110.882432

ԱԱՀ համարանիշ 01269162

Ընդհանուր

«Արմենիա» ավիաընկերությունն իրեն իրավունք է վերապահում ցանկացած ժամանակ փոխել կայքի հայեցողակարգը՝ առանց նախապես կայքի օգտատերերին տեղեկացնելու: «Արմենիա» ավիաընկերությունն իրեն իրավունք է վերապահում ցանկացած ժամանակ ցանկացած այցելուի գրկել կայքից օգտվելու հնարավորությունից:

Վերոնշյալ պայմանները վերաբերում են միայն կայքից օգտվելուն: Ավիաընկերության մյուս ծառայությունների համար գործում են առանձին, այլ պայմաններ:

Սույն համաձայնագիրը կազմվել է Երևանում (Հայաստան): Այս համաձայնագրի կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են ՀՀ օրենքով՝ առանց միջազգային մասնավոր իրավունքի սկզբունքների հիշատակման: Սույն համաձայնագրից բխող, կամ դրա հետ կապված, ցանկացած պահանջի կամ հակասության դեպքում կողմերը պարտավորվում են Հայաստանի Հանրապետության դատարանների բացառիկ իրավասությանը:

Դուք գիտակցում եք, որ սույն համաձայնագրով կամ կայքից օգտվելով Ձեր և «Արմենիա» ավիաընկերության միջև որևէ համատեղ ձեռնարկություն, գործընկերություն, աշխատանքային կամ գործակալական հարաբերություններ չի հաստատվում: Դուք համաձայնում եք, որ չեք ներկայանալու որպես «Արմենիա» ավիաընկերության ներկայացուցիչ, գործակալ կամ աշխատակից: Նման դեպքերում

«Արմենիա» ավիաընկերությունը պատասխանատվություն չի կրում օգտատիրոջ համար:

«Արմենիա» ավիաընկերության կողմից համաձայնագրի կատարումը վերահսկվում է ՀՀ օրենքով:

Եթե սույն Համաձայնագրի որևէ մաս համարվում է անվավեր կամ գործող օրենքի համաձայն անթույլատրելի՝ ներառյալ երաշխիքներից հրաժարումը և վերոհիշյալ պատասխանատվության սահմանափակումները, ապա անվավեր կամ անթույլատրելի համարվող դրույթը փոխարինվում է գործող, ուժի մեջ մտած դրույթով, որը առավելագույնս համապատասխանում է սկզբնական դրույթի նպատակին և համաձայնագրի մնացած կետերը շարունակում են գործել:

Սույն համաձայնագիրը հանդիսանում է օգտատիրոջ և «Արմենիա» ավիաընկերության միջև ամբողջական համաձայնագիր՝ սույն կայքի, դրանում առաջարկվող ծառայությունների վերաբերյալ: Այն փոխարինում է օգտատիրոջ և «Արմենիա» ավիաընկերության միջև այս կայքին վերաբերող բոլոր նախորդ հաղորդակցություններին և առաջարկներին՝ լինի էլեկտրոնային, բանավոր թե գրավոր: Այս Համաձայնագրի տպագիր և էլեկտրոնային տարբերակները, որոնք հիմնված են սույն համաձայնագրի վրա կամ առնչվում են դրան նույն ձևով և նույն պայմաններով, ինչ մյուս փաստաթղթերն ու արձանագրությունները, որոնք ի սկզբանե ստեղծվել և պահվել են տպագիր տարբերակով, ընդունելի են դատական կամ վարչական վարույթներում:

Մտավոր սեփականության իրավունքներ

Սույն կայքում բոլոր ապրանքանիշերը, հեղինակային իրավունքները, տվյալների բազայի և մտավոր սեփականության իրավունքները պատկանում են «Արմենիա» ավիաընկերությանը և/կամ ընկերության լիցենզավորողներին: Առանց «Արմենիա» ավիաընկերության թույլտվության արգելվում է սույն կայքի որևէ մաս պատճենել, օգտագործել, վերարտադրել, կրկնօրինակել, վերբեռնել, հրապարակել, վաճառել կամ կամ օգտագործել որևէ այլ նպատակով, եթե օրենքով որևէ հստակ բան նախատեսված չէ:

Ամրագրումներ

Օգտատերը երաշխավորում է, որ առնվազն 18 տարեկան է և ունի իրավական լիազորություններ սույն համաձայնագրի կողմ դառնալու համար և օգտվել կայքից՝ վերը նշված պայմանների և դրույթների համաձայն: Օգտատերը համաձայնում է ֆինանսական պատասխանատվություն կրել կայքից օգտվելիս (այդ թվում՝ մեկ այլ անձի կողմից օգտատիրոջ հաշվի օգտագործումը, ներառյալ օգտատիրոջ հետ ապրող

անչափահասների կողմից հաշվի օգտագործումը): Օգտատերը համաձայնում է, որ կվերահսկի անչափահասների կողմից իր հաշվի օգտագործումը և սույնով նաև համաձայնում է վճարել բոլոր գանձումները և պատասխանատու լինել դրանց հետևանքների համար: Կայքից օգտվելիս օգտատերը երաշխավորում է, որ իր և իր ընտանիքի անդամների տրամադրած տեղեկությունները հավաստի են և ճգրիտ:

Կայքում ամրագրումներ կատարելու գործառույթը նախատեսված է բացառապես հաճախորդներին օգնելու համար, որպեսզի վերջիններս տեղյակ լինեն ճամփորդությանն առնչվող ապրանքների ու ծառայությունների մասին և ճիշտ որոշումներ կայացնեն ամրագրելիս: Առանց որևէ բացառության, արգելվում է ցանկացած տեսակի սպեկուլյատիվ, կեղծ կամ խարդախության միջոցով ամրագրում կատարելը: Օգտատերը համաձայն է, որ այս կայքի միջոցով իր կամ իր կողմից լիազորված անձը ճամփորդական ծառայությունների ամրագրումները կամ վճարումները պետք է կատարի միայն հստակ որոշում կայացնելուց հետո: Կայքից օգտվելիս բոլոր գանձումների, վճարների, տուրքերի, հարկերի և հարկումների ամբողջ պատասխանատվությունը կրում է օգտատերը:

Արտարժույթի փոխարժեքներ

Արտարժույթի փոխարժեքները հիմնված են տարբեր հանրային աղբյուրների վրա և նախատեսված են միայն խորհրդատվության համար: Ներկայացված փոխարժեքները ճշգրիտ չեն և հնարավոր է տարբերվեն իրական փոխարժեքներից: Փոխարժեքներն ամեն օր չեն թարմացվում, հետևաբար օգտատերը պետք է ստուգի թե վերջին անգամ երբ է թարմացվել փոխարժեքների պատուհանն ու արտարժույթի փոխարկիչը: Կայքում ներկայացված հավելվածը համարվում է ճշգրիտ, այնուամենայնիվ, «Արմենիա» ավիաընկերությունը և/կամ իր գործընկերները չեն երաշխավորում դրա ճշգրտությունը:

Հրաժարում պատասխանատվությունից

Կայքում ներկայացված տեղեկությունը, ապրանքներն ու ծառայությունները հնարավոր է պարունակեն որոշակի անճշտություններ կամ տպագրական սխալներ: Ներկայացված տեղեկությունը պարբերաբար թարմացվում, փոփոխվում է:

«Արմենիա» ավիաընկերությունը և/կամ իր գործընկերները պատասխանատվություն չեն կրում կայքում ներկայացված տեղեկության, ապրանքների կամ ծառայությունների ներկայացման համար: Նմանատիպ տեղեկությունները, ապրանքներն ու ծառայությունները ներկայացված են «այնպես, ինչպես կա»՝ առանց որևէ երաշխավորման:

Վերոնշյալ կետը չի վերաբերում «Արմենիա» ավիաընկերության և/կամ իր գործընկերների կողմից դիտավորյալ սխալ վարքագծի կամ կոպիտ անփութության հետևանքով և/կամ վնասվածք հասցնելու կամ մահվան հանգեցնելու դեպքում:

Երաշխիք

Դուք համաձայնում եք երաշխավորել և զերծ պահել «Արմենիա» ավիաընկերությանը, վերջինիս գործընկերներին բոլոր պարտավորություններից, ծախսերից (այդ թվում ողջամիտ փաստաբանական ծախսերից) վնասներից, որոնք կարող են առաջանալ կայքից օգտվելիս:

Հղում դեպի այլ կայքեր

Կայքում հնարավոր է լինեն հղումներ կամ տեղեկանքներ, որոնք տանում են դեպի երրորդ կողմի հղումներ. «Արմենիա» ավիաընկերությունը պատասխանատվություն չի ստանձնում երրորդ կողմի հղումների, ապրանքների կամ ծառայությունների համար: Երրորդ կողմի հղումները ներառված են բացառապես օգտատերերին օգնելու համար և հաստատված չեն «Արմենիա» ավիաընկերության և/կամ վերջինիս գործընկերների կողմից: Երրորդ կողմի հղումներից օգտվելիս ամբողջ պատասխանատվությունը կրում է օգտատերը:

Ցանկացած երրորդ կողմ, որ ցանկանում է իր հղումը տեղադրել կայքում պետք է տեղեկացնի «Արմենիա» ավիաընկերությանն ու նշի ցանկության պատճառը: «Արմենիա» ավիաընկերությունն իրեն իրավունք է վերապահում մերժել կայքում հղումներ տեղադրելու հայտերը: Եթե, ամեն դեպքում, «Արմենիա» ավիաընկերությունը թույլատրում է երրորդ կողմի հղում տեղադրել կայքում, ապա պարտավոր չէ փոխադարձ կապ հաստատել երրորդ կողմի հետ: